



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
Շրջակա միջավայրի նախարար  
Հ. Սիմիոյան

«27» 01 2022թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0002-22

**Ձեռնարկողը՝**

**«ԱՎ Մայնինգ» ՍՊԸ**

Կուրայքի մարզ, Նոր Գեղի համայնք, Չարենցի 36ր.

**Գործունեությունը՝**

Ստրեփանավանի հանքային շրջանի Արջիձորի հանքային դաշտի Սնկաձորի գունազեղ քարերի և ոսկու հանքերակույմների սահմաններում 2021-2023թթ. երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ  
Լոռու մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝



Խ. Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0002-22

<<27>> 01 2022թ.

**Լոռու մարզի Ստեփանավանի հանքային շրջանի Արջիձորի հանքային դաշտի Սնկաձորի գունագեղ քարերի և ոսկու հանքերակումների սահմաններում 2021-2023թթ. երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ**

Ներածական մաս.

Ձեռնարկող՝

«ԱՎ Մայնինգ» ՍՊԸ

Փաստաթղթի տեսակը՝

Երկրաբանական ուսումնասիրության նախնական գնահատման հայտ (Գ կատեգորիա)

Գտնվելու վայրը՝

Լոռու մարզ, Ստեփանավան համայնքի Կաթնաղբյուր բնակավայր

Նախնական գնահատման հայտով նախատեսվում է 2021-2023թթ. ընթացքում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների միջոցով Լոռու մարզի Ստեփանավանի տարածաշրջանի Արջիձորի հանքային դաշտի հայցվող տարածքի սահմաններում հետախուզել, գնահատել և հաշվարկել ոսկու և գունագեղ քարերի (յաշմա, խալցեդոն, օձաքարեր) պաշարներ:

Երկրաբանական աշխատանքները կատարվելու են շիփային հանույթի, մակերեսային լեռնային փորվածքների անցման, նմուշարկման միջոցով:

Նախատեսվող երկրաբանական ուսումնասիրությունը կատարվելու է «ԱՎ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ-ի ֆինանսական միջոցներով:

Գործունեության իրականացման նպատակն է Ստեփանավանի հանքային շրջանի Արջիձորի հանքային դաշտի սահմաններում կատարել որոնողափնտրողական և հետախուզական աշխատանքներ, հանքերակումների հետախուզում և պաշարների գնահատում, գերհիմքային ապարների տարածման սահմաններում գունագեղ քարերի՝ յաշմաների, խալցեդոնի, օձաքարերի, երևակումների հետախուզում հեռանկարային տեղամասերի առանձնացում և արդյունաբերական նշանակության գնահատում:

Նախատեսվում է ցրոնային ոսկու հումքի նմուշով տեխնոլոգիական ուսումնասիրություններ, հեռանկարային տեղամասերի պաշարների մանրազնին հետախուզում, պաշարների հաշվարկման համար կոնդիցիաների պարամետրերի SS< և ամփոփ հաշվետվության կազմում և ներկայացում պաշարների հաստատման:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի, 2-րդ կետի ա. ենթակետի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ:

**Նկարագրական մաս.** Համաձայն նախնական գնահատման հայտի Արջիծորի հանքային դաշտը գտնվում է Լոռու մարզում, Ստեփանավան քաղաքից 23 կմ, իսկ Կաթնաղբյուր գյուղից՝ 8 կմ դեպի արևմուտք, Արջիծոր և Սնկաձոր գետակների ավազանում, Բազումի լեռնաշղթայի հյուսիսային լանջին: Հայցվող ընդերքի տեղամասը զբաղեցնում է 407.5հա մակերես: Տեղամասը գրունտային ճանապարհով կապված է Կաթնաղբյուր գյուղի հետ: Տեղամասից 4կմ հեռավորության վրա առկա են էլեկտրահաղորդման բարձրավոլտ գծեր, իսկ տեխնիկական և խմելու ջուրը գտնվում է տեղում:

Արջիծորի հանքային դաշտը տեղադրված է 1700-2500մ բացարձակ բարձրությունների վրա: Հանքային դաշտի ռելիեֆը լեռնային է, խիստ կտրատված:

Շրջանի կլիման մեղմ է, խոնավ, ինչով բացատրվում է այդտեղի ջրային ցանցի ջրառատությունը: Տեղումների միջին տարեկան քանակությունը կազմում է 650-700 մմ: Օդի միջին ջերմաստիճանը կազմում է ամռանը +14°C, ձմռանը -15°C: Ձյան ծածկույթը հանքային դաշտի ծորակներում մնում է 4-5 ամիս, ջրաբաժաններում՝ 5-6 ամիս:

Համաձայն նախնական գնահատման հայտի տեղամասի տարածաշրջանը հարուստ է ջրային ռեսուրսներով: Զրագրական հիմնական միավորը Ձորագետ գետն է՝ իր Արջիծոր, Չերնայա, Չքնաղ, Տաշիր, Ուռուտ, Գյառ-գյառ, Մեծ-ձոր և բազմաթիվ այլ վտակներով: Գետերը պատկանում են Քուր գետի համակարգին և բնութագրվում են ձնա-անձրևային սնումով ու փոփոխական դեբիտով: Կան քաղցրահամ և հանքային ջրերի բազմաթիվ աղբյուրներ, ինչպես նաև՝ Լոռու սարավանդի ստորերկրյա ջրերի ավազանը, որը ծագումնաբանորեն կապված է բազալտային ծածկոցի հետ: Տեղամասում հատուկ պահպանվող տարածքներ, սողանքներ, բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ, բնության և մշակութային հուշարձաններ չկան:

Տարածքն ընդգրկված է Գուգարքի ֆիզիկաաշխարհագրական շրջանի մեջ, որտեղ ըստ բարձրության հերթափոխվում են չոր տափաստանային, լեռնաանտառային, լեռնատափաստանային, մերձալպյան և ալպյան բարձունքային լանդշաֆտային գոտիները:

Շրջանում ըստ բարձրության իրար են հերթափոխում լեռնամարգագետնային, մարգագետնատափաստանային, գորշ լեռնային, մարգագետնային սևահողանման, գետահովտադարավանդային հողերը և սևահողերը:

Արջիծորի հանքային դաշտի հայցվող տարածքի երևակումը ARM WGS-84 կոորդինատային համակարգով բնութագրվում է հետևյալ ծայրակետային կոորդինատներով:

X=4543000,  
X=4544000,  
X=4543000,  
X=4541500,  
X=4541500,

y=8421900  
y=8423900  
y=8426900  
y=8426400  
y=8425900

X=454300,

X=454200,

X=454300,

y=8425300

y=8422900

y=8421900

Համաձայն հայտի՝ հետախուզվող տեղամասում հանքային մարմինների բացման, հանքայնացման օրինաչափությունները, հանքամարմինների ձևաբանությունը և հզորությունը պարզաբանելու, ինչպես նաև հանքաերևակույմների հանքայնացման բնույթն ուսումնասիրելու և նմուշարկելու նպատակով նախատեսվում է անցնել վերգետնյա լեռնային փորվածքներ՝ հետախուզաառուներ:

Հետախուզաառուների խորությունը նախատեսվում է ընդունել մինչև 2մ /միջինը 1.5մ/, լայնությունը 0.8մ: Հետախուզաառուների անցումը նախատեսվում է իրականացնել ձեռքով և մեքենայացված՝ էքսկավատորի միջոցով:

Նախատեսվում է անցնել շուրջ 50 հատ, միջինը 10 մ երկարությամբ 500զծ.մ կամ 600մ<sup>3</sup> հետախուզաառու և 150 հատ 5 մ միջին խորությամբ, 1.25 մ<sup>2</sup> կտրվածքով հորեր՝ ընդհանուր 750 գ.մ. կամ 937.5 մ<sup>3</sup>:

Հետախուզաառուները և հորերը, համաձայն անվտանգության տեխնիկայի և շրջակա միջավայրի պահպանության կանոնների, փաստագրումից և նմուշարկումից հետո ռեկուլտիվացվելու են ընդհանուր 1537.5մ<sup>3</sup> ծավալով, որի ընդհանուր մակերեսը կկազմի 587.5մ<sup>2</sup>:

Ակոսային նմուշարկումը հանդիսանում է լեռնային փորվածքների հիմնական նմուշարկման ձևը: Նմուշարկման նպատակով ակոսը տեղադրվում է առվի հատակին և հորի պատին:

Առուներից նախատեսվում է վերցնել 400 ակոսային նմուշ, իսկ հորերից՝ 200 համախառը նմուշ: Գունագեղ քարերից նախատեսվում է վերցնել 50 մենաքարային նմուշ:

Ցրոնային ոսկու պարունակությունների առավել ճիշտ որոշման նպատակով նախատեսվում է մեծածավալ նմուշների վերցնում՝ ընդհանուր 50մ<sup>3</sup> ծավալով: Այդ ծավալը մախատեսվում է տեղում մշակել՝ լվացման միջոցով:

Նախատեսվում է հորատանցքերում կատարել դիտարկումներ ջրարբի հորիզոնների առկայությունը պարզելու համար, միաժամանակ ուսումնասիրելով ջրի որակը և կատարելով ռեժիմային դիտարկումներ:

Նախատեսվում է հետախուզափորվածքների քարտեզագրում և լեռնային փորվածքների մարկշեյդերական սպասարկում ամբողջ աշխատանքների տևողության ընթացքում:

Ուսումնասիրությունների նախնական փուլում նախատեսվում է գետային ցանցով կատարել շլիխային հանույթ՝ փոքրածավալ և մեծածավալ նմուշներով, ընդամենը 450 նմուշ: Նմուշները կենթարկվեն միներալոգիական ուսումնասիրությունների և քանակական անալիզների դաշտային պայմաններում:

Նախագծով նախատեսված հիմնական աշխատանքներին զուգընթաց իրականացվելու է ապարների ռադիոակտիվության ուսումնասիրություններ:

Հայցվող տեղամասում օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում տեխնաձին ճնշումներ են դրսևորվելու մթնոլորտի, հողային ծածկույթի, բուսական և կենդանական աշխարհի, ինչպես նաև լանդշաֆտային ամբողջականության վրա:

Երկրաբանահետախուզական աշխատանքների ընթացքում կիրառվող ավտոտրանսպորտը դառնալու է վնասակար գազերի և փոշու արտանետման աղբյուր:

Արտանետումները կապված են լինելու շարժական տեխնիկայի և ավտոտրանսպորտի աշխատանքի հետ: Աննշան ծավալով փոշեգոյացում կապված է լինելու նաև հորատման աշխատանքների հետ:

Համաձայն հայտի մեքենաների տեղաշարժն իրականացնելիս նախատեսվում է օգտագործել առկա ճանապարհները և կամրջակները, ինչը կբացառի մակերևութային ջրերի աղտոտումը նավթամթերքներով:

Նախատեսվող գործունեության ընթացքում քիմիկատների օգտագործում և հորատապայթեցման աշխատանքներ չեն իրականացվելու: Անձրևաջրերը և ձյան հոսքերը տարածքից կհեռանան բնական առվակների միջոցով, քանի որ տարածքը գտնվում է ջրբաժանային մասում:

Աշխատանքների կատարման ժամկետները սահմանված են՝ 2021թ. 2-րդ եռամսյակից մինչև 2023թ. 4-րդ եռամսյակը:

Երկրաբանական ուսումնասիրության ընթացքում վերցված բոլոր նմուշների լաբորատոր հետազոտություններն իրականացվելու են համապատասխան հավաստագրեր ունեցող լաբորատորիաներում:

Համաձայն հայտի ուսումնասիրության ընթացքում թափոններ չեն առաջանալու, քանի որ առաջացած հողային շերտը և մակաբացման ապարները կուտակվելու են անմիջապես փորվածքների հարևանությամբ, պահվելու են կարճ ժամկետով և աշխատանքների ավարտից անմիջապես հետո օգտագործվելու են խախտված տարածքների հարթեցման համար:

Նախնական գնահատման հայտով նախատեսվում է օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից, բուսական և կենդանական աշխարհի՝ պահպանման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր և մոնիթորինգ:

Նախատեսվում է իրականացնել՝

- փոշենստեցման նպատակով՝ ջրցան,
- ջրերի նմուշառում գարնան և աշնան ամիսներին՝ մինչև երևակման տարածքը և երևակման տարածքից հետո,
- օգտագործվող տրանսպորտային միջոցների վրա արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում,
- նավթամթերքների պահում անթափանց տարաներում, հատուկ վայրերում աշխատանքները սպասարկող բեռնատար մեքենայի թափքում,
- կենցաղային աղբի կուտակում 35լ տարողությամբ տոպրակների մեջ և տեղափոխում շրջանի աղբավայր,
- հողի բերրի շերտի, պահեստավորում, աշխատանքների ավարտից հետո օգտագործում՝ լանդշաֆտի վերականգնման նպատակով,
- յուղերի անվտանգ պահեստավորում և փոխադրում, դիզելային վառելիքի մնացորդների հանձնում վերամշակման կետերին,
- մթնոլորտային օդի աղտոտվածության պարբերաբար հսկողության սահմանում, արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումների կատարման միջոցով (շաբաթը մեկ անգամ),
- ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի N 781-Ն որոշման դրույթների ապահովում,
- աշխատանքների ավարտից հետո խախտված տարածքների ռեկուլտիվացիայի իրականացում և այլն:



**Պատճառաբանական եզրահանգումներ.** Համաձայն հայտի հայցվող տեղամասի տարածքը հարուստ է ջրային ռեսուրսներով, քաղցրահամ և հանքային ջրերի բազմաթիվ աղբյուրներով, տարածքում է գտնվում նաև Լոռու սարավանդի ստորերկրյա ջրերի ավազանը, իսկ Արջիձորի ոսկու հանքերևակման աջափնյա մասը տեղադրված է Ձորագետի երկու աջ վտակների՝ Արջիձորի և Սնկաձորի ակունքներում և տարածվում է մինչև այդ վտակների ստորին հոսանքներ, /գբաղեցնելով նաև հարակից և շրջափակող ջրբաժանները/, իսկ ծախսափնյա մասը գտնվում է Ձորագետի ծախս ավիում՝ Սնկաձոր գետակի դիմաց:

Նախնական գնահատման հայտում շրջակա միջավայրի բաղադրիչների՝ մասնավորապես. ջրային ռեսուրսների վրա հնարավոր ազդեցությունները /ստորերկրյա և մակերևութային/ և դրանց մեղմմանն ուղղված միջոցառումները լիարժեք և հիմնավորված չեն ներկայացվել:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, արտակարգ իրավիճակների, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, Լոռու մարզպետարանը, Ստեփանավանի համայնքպետարանը:

Համաձայն Կադաստրի կոմիտեի տվյալների հայցվող տարածքի շրջադարձային կետերի կորդինատներով պարփակված տարածքի մակերեսը կազմում է 407.5հա, որտեղ ներառված են նաև անտառային նշանակության թփուտներ և ջրային նպատակային նշանակության հողեր:

Ստեփանավան համայնքի Կաթնաղբյուր բնակավայրում 2022թ. հունվարի 20-ին իրականացված հանրային քննարկումներում համայնքի բնակիչները տարակարծիք էին նախատեսվող գործունեության իրականացման հարցի շուրջ, հասարակական կազմակերպության ներկայացուցիչները և բնակիչների մի մասը դեմ արտահայտվեցին նախատեսվող գործունեության իրականացմանը՝ ելնելով հանքավայրի հետագա շահագործման և դրա հետևանքով շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններից:

Հանրային քննարկումներից հետո «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ է ներկայացվել Լոռու մարզի, Ստեփանավան համայնքի ղեկավարի 2022թ. հունվարի 26-ի N87 գրությունը, որում ներկայացվել է Կաթնաղբյուր բնակավայրի բնակիչների հետ իրականացված հարցումների վերաբերյալ Ստեփանավան համայնքի կարծիքը, համաձայն որի Արջիձորի հանքային դաշտի Սնկաձորի գունագեղ քարերի և ոսկու հանքերևակումների սահմաններում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների վերաբերյալ համայնքը չի կարող տալ դրական կարծիք, քանի որ Կաթնաղբյուր բնակավայրն ունի առանձնահատուկ բնություն և աչքի է ընկնում բնական առողջարար ջրերով, և հեռանկարում նախատեսվում է զարգացնել էկոտուրիզմը:

Կաթնաղբյուր բնակավայրի բնակիչները և «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ գրություն են ներկայացրել շրջակա միջավայրի նախարարություն, նշելով՝ մասնավորապես. որ դեմ են բնակավայրի տարածքում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացմանը, քանի որ ցանկանում են այն պահպանել որպես էկոլոգիական մաքուր, գյուղատնտեսական նշանակության բնակավայր՝ ապահովելով հեռանկարներ գյուղատնտեսության ու զբոսաշրջության համար:

Ելնելով վերոնշյալ հիմնավորումներից, Կաթնաղբյուր համայնքում իրականացված հանրային քննարկումների արդյունքներից, շահագրգիռ հանրության մտահոգություններից, երկրաբանական ուսումնասիրության ժամանակ տարածքի ջրային ռեսուրսների աղտոտման և հոսքային ռեժիմի խախտման հնարավոր ռիսկերից, պետք է նշել, որ նախատեսվող գործունեության իրականացումը համարվում է ոչ նպատակահարմար, քանի որ նախատեսվող երկրաբանական ուսումնասիրության, այնուհետև հնարավոր հանքավայրի շահագործումը խաթարելու են տարածքի էկոհամակարգը, ջրային գետային ցանցը, անտառային տարածքները, լանդշաֆտը և հարակից շրջակա միջավայրը:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հիմք ընդունելով վերը նշված պատճառաբանական եզրահանգումները՝ «Ավ Մայինգի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Լոռու մարզի Ստեփանավանի հանքային շրջանի Արջիձորի հանքային դաշտի Սնկաձորի գունագեղ քարերի և ոսկու հանքերակույմների սահմաններում 2021-2023թթ. երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է բացասական եզրակացություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ Գլխ. մասնագետ՝



Ա. Վարդանյան